ԳԵՎՈՐԳ ԽԱՆԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
տ.գ.թ.

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընդունելով, որ ՀՀ-ում շարունակական տնտեսական աճն ապահովելու, արտահանման հնարավորություններն ընդլայնելու, երկրի մրցունակությունը և վարկանիշը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է զարգացնել հատկապես տնտեսության բարձր տեխնոլոգիատարություն ունեցող ճյուղերը և իրականացնել տնտեսության ճյուղերի տեխնոլոգիական վերազինում, տեխնոլոգիական վերակառուցում, փորձենք ներկայացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական մակարդակ ունեցող ճյուղերի ներկա վիճակը և ՀՀ տնտեսության առանձին ճյուղերում իրականացված տեխնոլոգիական ներդրումները և գնահատել դրանց ազդեցությունը թողարկվող արդյունքի մրցունակության և արտահանման հնարավորությունների ընդլայնման վրա: Անշուշտ, հնարավոր չէ մեկ հոդվածում ներկայացնել ՀՀ տնտեսության ամբողջ տեխնոլոգիական վիճակը և իրականացված տեխնոլոգիական ներդրումների դինամիկան, ինչպես նաև վերջինիս ազդեցությունը թողարկվող արդյունքի մրցունակության և արտահանման հնարավորությունների ընդլայնման վրա: Հետևաբար, մեր հոդվածում մենք կներկայացնենք Հայաստանում բարձր տեխնոլոգիատարություն ունեցող ճյուղերից հիմնականի՝ էլեկտրոնային արդյունաբերության ճյուղի տեխնոլոգիական վիճակը, ինչպես նաև կանդրադառնանք և կուսումնասիրենք այժմ մեծ զարգացում ապրող սննդի վերամշակող (հիմնականում տոմատի մածուկի և մրգային այլ պյուրների) արտադրությունում իրականացված տեխնոլոգիական ներդրումների պատկերը և ազդեցությունն արտահանման հնարավորությունների ու թողարկվող արդյունքի մրցունակության բարձրացման վրա:

Նախ անդրադառնանք «տեխնոլոգիատարություն» հասկացության սահմանմանը: Տնտեսագիտական տեսության մեջ առանձին ապրանքի կամ տնտեսության ճյուղի «տեխնոլոգիատարությունը» սահմանվում է որպես առանձին ճյուղերում ապրանքների արտադրության և առևտրի ծավալներում հետազոտությունների ու մշակումների վրա կատարված ծախսումների բաժնեմաս:[1] Այս ցուցանիշը հաշվարկվում է ըստ երկրների առանձին ճյուղերի և ապրանքների, այնուհետև սահմանվում է միջին ցուցանիշ, որով և որոշվում է ապրանքի կամ տնտեսության ճյուղի տեխնոլոգիատարության մակարդակի բարձր կամ ցածր լինելը:

ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման հանձնաժողովի (UNCTAD) դասակարգման համաձայն՝ բարձր տեխնոլոգիատարության մակարդակ ունի տիեզերական սարքավորումների առևտուրը, որտեղ հետազոտություններին և մշակումներին ընկնող ծախսերը կազմում են համախառն ծախսերի 22.7 %, համակարգիչներինը՝ 17.5%, էլեկտրոնիկայի և առանձին բաղկացուցիչներինը՝ 10.4 %, դեղորայքինը՝ 8.7 % և այլ ապրանքների առևտուրը: Այսպիսով, բարձր տեխնոլոգիատարության մակարակը տատանվում է 4.4-22.7%-ի սահմաններում, իսկ բարձր տեխնոլոգիատարության միջին մակարդակը կազմում է 11.4 %:

Տեխնոլոգիատարության դասակարգման այս մոտեցման պայմաններում, Հայաստանում բարձր տեխնոլոգիատարության մակարդակ ունեցող հիմնական ճյուղ է համարվում էլեկտրոնային արդյունաբերությունը:

Խորհրդային տարիներին էլեկտրոնիկայի ինդուստրիան կամ արդյունաբերությունը Հայաստանի տեխնոլոգիապես ամենազարգացած ճյուղն է հանդիսացել: Խորհրդային Հայաստանում տնտեսության այս ճյուղի տեխնոլոգիական զարգացվածության բարձր մակարդակը պայմանավորված էր հատկապես երկրի ինժեներատեխնիկական բարձր ներուժով, ինժիներական, տեխնիկական գիտական հաստատությունների ակտիվ կենսագործունեությունով, արտադրական ձեռնարկությունների հետ վերջիններիս գործունեության սերտաճման բարձր մակարդակով, ինչպես նաև Խորհրդային Միության ռազմաարդյունաբերական համալիրի, զինվորական ավիացիոն և տիեզերական արդյունաբերության հետ ամուր գործնական կապերի առկայությամբ:

Տնտեսության այս ճյուղը բարձր որակավորման մասնագետներով ապահովող ուսումնական հաստատությունների կազմում յուրովի ընդգծվում է նախկին Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի, Երևանի Պետական Համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների դերը, մինչդեռ պակաս կարևորություն չուներ նաև Խորհրդային Միության և Արևելյան Եվրոպայի համանման ինստիտուտները և համալսարանների բաժինները, որոնցում պարբերաբար ուսուցում և վերապատրաստում էին անցնում բազմաթիվ ուսանողներ:

Էլեկտրոնիկայի արդյունաբերության զարգացման հարցում առավել ավանդ ունեցող գիտական, տեխնիկական մասնագիտական հաստատությունների անվանացանկում առանձնանում էին հատկապես Երևանի մաթեմատիկական մեքենաների, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի չափումների, ինֆորմացիոն և ավտոմատացման պրոբլեմների, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, լազերային հետազոտությունների ինստիտուտները, ինչպես նաև մի շարք մասնագիտական այլ ինստիտուտները, գիտահետազոտական կենտրոնները և կոնստրուկտորական կազմակերպությունները, արտադրական այնպիսի ձեռնարկությունները, ինչպիսին են «ԱՆԻ» ԳԱՄ, «Հրազդանմաշ», «Մարս» և այլն:

Ինժիներատեխնիկական բարձր որակավորում ունեցող անձնակազմի հետ մեկտեղ պետք է նշել կառավարման համակարգի, մեղմ ասած, «թուլությունը»: Խորհրդային տարիներին կենտրոնացված իշխանու-

[1] Киреев А. Международная экономика. М 1997 часть 1, стр.342

թյունը Մոսկվայում պատասխանատու էր յուրաքանչյուր ձեռնարկության արտադրանքի սպառողների և հումքի մատակարարների համար: Արդյունքում, ձեռնարկությունները չունեին պահանջմունք՝ զարգացնելու մարքեթինգի հմտությունները և առհասարակ չէին ընկալում վերջինիս դերը և նշանակալությունը ձեռնարկության կառավարման հարցում:

Խորհրդային Հայաստանի էլեկտրոնիկայի արդյունաբերության տեխնոլոգիական վերազինումն էականորեն պայմանավորված էր համաշխարհային ասպարեզում Խորհրդային Միության պաշտպանության համակարգի, ռազմական ավիացիայի և տիեզերական արդյունաբերության առաջավոր դիրքերով: «Սառը պատերազմի» տարիներին ամբողջ միության լավագույն մասնագետների ջանքերը, ԳՏՓԿԱ-ի ֆինանսավորման ծախսերի զգալի մասն ուղղված էր պաշտպանական համակարգի զարգացմանը և կատարելագործմանը, պաշտպանության համակարգում նորագույն տեխնոլոգիաների ստեղծմանը և ներդրմանը, ինչի հետևանքով այսօր ևս Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում է ռազմական տերություններից ամենահզորը: Ռազմավարական զարգացման այսպիսի վեկտորի պայմաններում տնտեսության առանձին ճյուղերը հանդիսանում էին պաշտպանության համակարգի հիմնական սպասարկողը: Ինչը կարելի է ասել նաև Խորհրդային Հայաստանի էլեկտրոնիկայի արդյունաբերության համար, որը հիմնականում կատարում էր ռազմական, տիեզերական արդյունաբերության պատվերները՝ պետության պաշտպանության, անվտանգության մակարդակը բարձրացնելու համար:

Այս ճյուղի զարգացման գագաթնակետը եղել է 80-ականների վերջը, երբ տարբեր գնահատումներով Խորհրդային Հայաստանի էլեկտրոնիկայի ինդուստրիան ապահովել է ամբողջ միության պաշտպանության համակարգի, ինչպես նաև տիեզերական և ավիացիոն արդյունաբերության գործունեության համար անհրաժեշտ տարաբնույթ էլեկտրոնային բաղկացուցիչների 25-30 %: Տնտեսության այս ճյուղում հատկապես առանձնանում էին այնպիսի առաջավոր ձեռնարկություններ, ինչպիսիք էին «Հրազդանմաշը», «Միրուսը», «Սելենան», «Էլեկտրոնը», «Օրբիտան», իսկ 80-ականների վերջերին նախագծվեց և մասամբ ստեղծվեց տեխնոլոգիական վերազինման բարձրագույն մակարդակ ունեցող երկու ձեռնարկություն՝ «Մարսը» և «Տրանզիստորը». մինչդեռ Խորհրդային Միության փլուզումից հետո «Տրանզիստորի» ներդրումային ծրագիրը մնաց անավարտ, իսկ «Մարսը», չնայած ներդրումային ծրագրի ավարտին, չկարողացավ իր լրիվ հզորությամբ աշխատել միութենական կապերի խզման պատճառով, որը հետագայում ՀՀ կառավարության կողմից «գույքի պարտքի դիմաց» ծրագրի շրջանակներում փոխանցվեց Ռուսաստանի Դաշնությանը:

Ամփոփելով կարելի է փաստել, որ 80-ականների վերջերին տնտեսության այս ճյուղին բնորոշ էր ինչպես երկրորդ, այնպես էլ երրորդ տեխնոլոգիական դարսվածքի առանձնահատկությունները, ընդ որում, երրորդ տեխնոլոգիական դարսվածքի առանձնահատկությունները հիմնականում բնորոշ էին տնտեսության այս ճյուղի որոշ առաջավոր և նորաստեղծ ձեռնարկություններին:

Ներկայումս տնտեսության այս ճյուղում չի արտադրվում 80-ականների վերջերին համարժեք արտադրանք՝ ոչ ծավալով և ոչ բազմազանությամբ, ինչը հիմնականում արդյունք է պետության անուշադրության: Այսպես. Ռուսաստանի Դաշնությանը հաջողվեց բավարար ֆինանսական միջոցներ ներդնել ինչպես սեփական միջոցների, այնպես էլ միջազգային փոխառուների հաշվին, էլեկտրոնիկայի արդյունաբերության ռազմական ուղղվածությունը քաղաքացիական սպառման ուղղվածության փոխարինելու համար, մինչդեռ Հայաստանում այդպիսի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով արտադրության նման փոխակերպում չիրականացավ:

Աղյուսակ 1.

Էլեկտրոնիկայի արդյունաբերության ճյուղում ընդգրկված ձեռնարկությունների արտադրական սարքավորումների օգտագործման տարիքը և ծագումը

N	Արտադրական սարքավորումների տեսակարար կշիռն ըստ օգտագործման տարիքի (տարիներով)						Արտադրական սարքավորումների տեսակարար կշիռն ըստ ծագման երկրների					
	մինչև 5 տարվա	5-10 տարվա	10-15 տարվա	15-20 տարվա	20 և ավելին տարվա	Դուրսգրման ենթակա	ԽՍՀՄ	Արևելյան Եվրոպա	ԱՊՀ	Արևմտյան Եվրոպա	Հարավ-Արևելյան և Հեռավոր Ասիա	ԱՄՆ
1	7,5%	92,5%	-	-	-	-	9,0%	91,0%	-	-	-	-
2	-	-	5,0%	-	95,0%	20,0%	95,0%	3,0%	-	-	1,0%	1,0%
3	-	-	-	100,0%	-	-	50,0%	50,0%	-	-	-	-
4	-	55,0%	28,0%	14,0%	3,0%	-	95,0%	-	-	-	2,5%	-
5	-	-	-	100,0%	-	50,0%	86,0%	14,0%	-	-	-	-
6	-	-	-	100,0%	-	80,0%	70,0%	-	-	30,0%	-	-
7	-	-	-	30,0%	70,0%	50,0%	50,0%	50,0%	-	-	-	-
8	-	-	-	-	100,0%	90,0%	100,0%	-	-	-	-	-
9	-	50,0%	50,0%	-	-	30,0%	75,0%	25,0%	-	-	-	-
10	100,0%	-	-	-	-	-	-	-	100,0%	-	-	-
11	-	-	100,0%	-	-	25,0%	85,0%	15,0%	-	-	-	-
12	-	-	100,0%	-	-	40,0%	60,0%	40,0%	-	-	-	-
13	5,0%	15,0%	50,0%	30,0%	-	70,0%	90,0%	5,0%	-	-	5,0%	-
14	85,0%	15,0%	-	-	-	-	-	20,0%	80,0%	-	-	-
15	-	-	-	-	100,0%	100,0%	100,0%	-	-	-	-	-
16	100,0%	-	-	-	-	-	-	-	-	-	100,0%	-
17	100,0%	-	-	-	-	-	-	-	100,0%	-	-	-
18	-	-	-	-	100,0%	100,0%	100,0%	-	-	-	-	-
19	-	-	-	50,0%	50,0%	50,0%	100,0%	-	-	-	-	-
20	-	-	100,0%	-	-	100,0%	60,0%	-	-	20,0%	-	20,0%
21	100,0%	-	-	-	-	-	-	100,0%	-	-	-	-

Էլեկտրոնիկայի արդյունաբերության ճյուղի տեխնոլոգիական վիճակը, այսինքն ճյուղում ընդգրկված ձեռնարկությունների արտադրական ֆոնդերի (արտադրական սարքավորումների) օգտագործման տարիքը ներկայացնելու համար մեր կողմից Զարգացման Հայկական Գործակալության անմիջական մասնակցությամբ իրականացրած հետազոտության արդյունքների[1] հիման վրա կառուցվել է հետևյալ աղյուսակը, որում արտացոլված են հետազոտության մեջ ընգրկված ձեռնարկությունների արտադրական սարքավորումների օգտագործման տարիքը և վերջիններիս ծագումը (տես աղյուսակ 1):

Նախ նշենք, որ հետազոտության մեջ ընգրկված 23 ձեռնարկություններից երկուսի մոտ բացակայում էին սարքավորումների տարիքի և ծագման երկրի վերաբերյալ տվյալները, ուստի մենք ստիպված էինք էլեկտրոնիկայի արդյունաբերության ճյուղում ընդգրկված ձեռնարկությունների արտադրական սարքավորումների օգտագործման տարիքի և ծագման երկրի վերաբերյալ ամփոփ պատկերը կառուցել 21 հետազոտված ձեռնարկությունների արդյունքների հիման վրա:

Աղյուսակի տվյալները փաստում են այն մասին, որ Հայաստանի անկախացումից հետո տնտեսության այս ճյուղի գործող ձեռնարկություններում արտադրական ֆոնդերը գրեթե չեն համալրվել /կամ նորացվել/. այսպես. հետազոտության մեջ ընդգրկված ձեռնարկությունների մոտ 65 %-ի մոտ արտադրական սարքավորումների օգտագործման ժամկետը գերազանցում է տաս տարին և ընդամենը հետազոտված ձեռնարկությունների 23 %-ի մոտ արտադրական սարքավորումների օգտագործման ժամկետը չի գերազանցում 5 տարին, ինչը հիմնականում բացատրվում է նոր ձեռնարկությունների ստեղծումով, որոնց թվին են պատկանում այնպիսի ձեռնարկությունները, ինչպիսին են «A-2» ՍՊԸ, «Center of Information Technology» ՍՊԸ, «Leda systems Armenian branch» ընկերությունը, «Վան» ՓԲԸ և այլ ձեռնարկությունները: Ասվածին հավելենք նաև այն, որ դիտարկված ձեռնարկությունների կեսից ավելիի արտադրական սարքավորումների կազմում գերակշռում են դուրսգրման ենթակա արտադրական սարքավորումների տեսակարար կշիռը, ինչը, անշուշտ, կդժվարեցնի ոչ միայն մրցունակ ապրանքների արտադրությունը, այլ նաև անխափան արտադրության կազմակերպումը:

Միաժամանակ կարելի է հետևություն անել, որ էլեկտրոնիկայի արդյունաբերության ճյուղում ընդգրկված ձեռնարկությունների արտադրական սարքավորումների ծագումը ըստ արտադրման երկրների՝ «ածանցվում է» վերջիններիս օգտագործման տարիքից, այսպես. այն ձեռնարկությունները, որոնց արտադրական սարքավորումների օգտագործման տարիքը գերազանցում է 10 տարին, այսինքն՝ որոնց արտադրական ֆոնդերի վերջին համալրումը իրականացվել է դեռևս Խորհրդային Միության տարիներին, հիմնականում զինված են ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի արտադրության արտադրական սարքավորումներով:

Այս հանգամանքը իր արտահայտումն է գտնում ստորև ներկայացված գծապատկեր 1.-ում, համաձայն որի՝ հետազոտության մեջ ընգրկված ձեռնարկություններում առկա արտադրական սարքավորումների 79 %-ը արտադրվել են ԽՍՀՄ-ում և Արևելյան Եվրոպայի երկրներում: Իսկ համեմատաբար նորաստեղծ ձեռնարկությունների արտադրական ֆոնդերում հատկապես գերակշռում է ԱՊՀ երկրներում արտադրված սարքավորումները և տեխնոլոգիաները, մինչդեռ հանդիպում են սարքավորումներ՝ արտադրված ինչպես Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում, այնպես էլ Սինգապուրում և Ճապոնիայում:



Գծապատկեր 1. ՀՀ էլեկտրոնիկայի ճյուղում ձեռնարկությունների տեխնոլոգիական սարքավորումների կառուցվածքն ըստ ծագման երկրների

Այսպիսով, ամփոփելով Հայաստանում էլեկտրոնիկայի արդյունաբերության ճյուղի ձեռնարկություններում իրականացած հետազոտությունների արդյունքները՝ կարելի է փաստել հետևյալը. միութենական նշանակության երբեմնի հզոր և տեխնոլոգիապես գերհագեցած ձեռնարկություններում անկախացումից հետո արտադրական սարքավորումների վերազինում գրեթե չի կատարվել, ինչի արդյունքում ձեռնարկությունների արտադրական ֆոնդի օգտագործման տարիքը գերազանցում է 10 տարին, իսկ սարքավորումների զգալի մասը ենթակա է դուրս գրման:

Մինչդեռ, չնայած տնտեսության այս ճյուղում առկա արտադրական ֆոնդերի ընդհանուր ծերացման խնդրին՝ այս ճյուղում կան յուրահատուկ ձեռնարկություններ /օրինակ «Մշակ» ՓԲԸ, «Մարս» ՊՓԲԸ, «LEDA

[1] ԶՀԳ և «Ամերիա» ՓԲԸ-ի կողմից 2003թ-ին իրականացրած հետազոտություն, որի արդյունքում հետազոտվել է ՀՀ-ի Էլեկտրոնիկայի արդյունաբերության ճյուղի 23 ձեռնարկություն, որոնք կազմում են տվյալ ճյուղի ավելի քան 80 %:

SISTEMS» Հայաստանյան մասնաճյուղը և այլն/, որոնք առանձնանում են ինչպես իրենց յուրովի տեխնոլոգիական սարքավորումներով և ինժեներատեխնիկական անձնակազմով, այնպես էլ թողարկվող արտադրանքով և վերջիններիս հաշվին պահպանում իրենց մրցունակությունը:

Մեքենաշինության արդյունաբերության ճյուղը ավանդաբար համարվում էր Խորհրդային Հայաստանի տեխնոլոգիապես առավել զարգացած ճյուղերից մեկը: Վերջինիս տեխնոլոգիական զարգացման հարաբերականորեն բարձր մակարդակը պայմանավորված է, ինչպես և էլեկտրոնային արդյունաբերության դեպքում, երկրի ինժեներատեխնիկական բարձր ներուժով, ինժեներական, տեխնիկական գիտական հաստատությունների ակտիվ կենսագործունեությունով, արտադրական ձեռնարկությունների հետ վերջիններիս գործունեության սերտաճման բարձր մակարդակով: Ի հաշիվ մեծաքանակ պատվերների և նախագծերի ամբողջ Խորհրդային Միությունից՝ տնտեսության այս ճյուղը համարվում էր Խորհրդային Հայաստանի արդյունաբերության առավել արտահանողական ուղղություն ունեցող ճյուղը, իսկ Հայաստանին բաժին էր ընկնում ընդամենը վերջինիս արտադրանքի 0.5 %-ը:

Չնայած այն հանգամանքին, որ ութսունականների վերջին տնտեսության այս ճյուղը դասվում էր ամենազարգացածների թվին, այնուամենայնիվ. Խորհրդային Միության փլուզումից հետո ամենաշատը տուժեց այս ճյուղը: Այսպես. ութսունականների կեսերին այս ճյուղի համախառն արտադրանքը կազմում էր համախառն արդյունաբերության 30%-ը, իսկ միության փլուզումից հետո այն կրճատվեց ավելի քան 50 անգամ և այժմ կազմում է ՀՆԱ-ի ընդամենը 0.3%-ը:

Ցավով պետք է փաստենք, որ միութենական կապերի խզումից և սեփականաշնորհման գործընթացի ավարտից հետո մի շարք ձեռնարկություններ իրականացրեցին իրենց արտադրողական ակտիվների զգալի մասի վաճառք, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեին հարաբերականորեն նոր սարքավորումները և տեխնոլոգիաները: Վերը նշված հանգամանքների արդյունքում այսօր երբեմնի զարգացած տնտեսության այս ճյուղում առկա է ոչ միայն արտադրական ֆոնդերի ծերացում, այլև որոշ ձեռնարկությունների առաջավոր տեխնոլոգիաների իսպառ բացակայություն: Հավելենք նաև, որ համաձայն Զարգացման Հայկական Գործակալության կողմից իրականացրած հետազոտության արդյունքների, տնտեսության այս ճյուղի ձեռնարկությունների սարքավորումների միջին տարիքը կազմում է 18-20 տարի:

Ամփոփելով շարադրվածը, համադրելով ՀՀ տնտեսության տեխնոլոգիատար ճյուղերից հիմնականի՝ էլեկտրոնային արդյունաբերության տեխնոլոգիական վիճակի բնութագրերի ուսումնասիրության արդյունքները՝ վստահորեն կարող ենք ասել, որ ՀՀ տնտեսության այս ճյուղերի տեխնոլոգիական կառուցվածքում առկա են ինչպես տեխնոլոգիական երկրորդ, այնպես էլ երրորդ դարսվածքի առանձնահատկությունները, ընդ որում, ընդգծվում է երկրորդ տեխնոլոգիական դարսվածքի առանձնահատկությունների գերակայությունը: Հետևաբար, 80-ականների վերջերի համեմատությամբ, այսօր տնտեսության այս ճյուղերի տեխնոլոգիական կառուցվածքում գրեթե փոփոխություն կատարվել, ինչը տեխնոլոգիական ներդրումների բացակայության և արտադրական ֆոնդերի համընդհանուր ծերացման պայմաններում, վկայում է տեխնոլոգիական խզման էլ ավել խորացման մասին:

Մեր կողմից, տեխնոլոգիական ներդրումների ազդեցությունը թողարկվող արդյունքի մրցունակության բարձրացման և, հետևաբար, արտահանման հնարավորությունների ընդլայնման վրա բացահայտելու նպատակով սննդի վերամշակման արդյունաբերության և հատկապես պահածոյացման արտադրության ընտրության ուսումնասիրության համար, պայմանավորված է հետևյալ հանգամանքով. այն շարունակաբար հանդիսացել է Հայաստանի առավել զարգացած և ավանդական ճյուղերից մեկը, ինչի մասին վկայում են ինչպես վերջինիս զգալի տեսակարար կշիռը համախառն արդյունաբերության կառուցվածքում՝ տատանվելով 31.3%-ից մինչև 37.1%, այնպես էլ վերջինիս շոշափելի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածում՝ տատանվելով 8.9-%-ից մինչև 10.3 %: Տնտեսության այս ճյուղի զարգացած լինելու մասին խոսում է նաև 1997-2002թթ ժամանակահատվածում վերջինիս թողարկման աճը և բացարձակ մեծությամբ՝ 38 415 մլն դրամով, և տոկոսներով՝ 46.35 %-ով: Այս հանգամանքները խոսում են մեր երկրի համար տնտեսության այս ճյուղի հեռանկարային լինելու մասին՝ շնորհիվ իր մրցակցային առավելությունների:

Նախկին կենտրոնացված պլանային տնտեսության համակարգում Խորհրդային կառավարությունը պահածոյացման գործարաններ կառուցել էր Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում: Մինչև 1991թ. Հայաստանում գործում էին պահածոների վերամշակման 28 գործարաններ: Պահածոների արդյունաբերությունում արտադրությունն ամենամեծ ծավալի է հասել 1985թ-ին, երբ արտադրվել էր մոտ 320 000 տոննա պահածո, իսկ տոմատի մածուկի արտադրության ծավալը կազմել է 24 672 տոննա:

Մինչդեռ, Խորհրդային Միության փլուզումից հետո տնտեսական ճգնաժամի տարիներին (1990-1995թթ.), պահածոների արտադրության ծավալները էականորեն կրճատվեցին: (տես գծապատկեր 2)

Ստորև ներկայացված գծապատկերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ութսունականների վերջերին և իննսունականների սկզբներին նկատվող արտադրության կտրուկ անկման տենդենցին հաջորդում է արտադրության վերականգնման գործընթաց:

Այսպիսով, հայկական սննդի վերամշակման արդյունաբերության պատմությունը կարելի է բաժանել երկու ժամանակահատվածի՝ մինչև 1991թ. և 1991թ-ից հետո: Մինչև 1991թ. արդյունաբերության այս ճյուղի նմանատիպ զարգացումը պայմանավորված էր Խորհրդային Միության հանրապետությունների միջև տնտեսական ամուր կապերով, որոնց առկայության պայմաններում արդյունաբերության այս ճյուղում գործող ձեռնարկությունների հիմնական խնդիրը հանդիսանում էր որակյալ արտադրանքի արտադրությունը: Խորհրդային Հայաստանի վերամշակող ձեռնարկությունների կողմից որակյալ արտադրանքի արտադրության հիմնական գրավականը հանդիսանում էր բարձրորակ հումքի (պոմիդորի, դեղձի, խնձորի) օգտագործումը վերամշակման գործընթացում, որոնք բնական նախապայմաններից ելնելով՝ օժտված են յուրահատուկ, եզակի համով:

Մինչդեռ միութենական կապերի խզումից հետո՝ տնտեսական ճգնաժամի տարիներին, գրանցվեց պահածոյացման արդյունաբերության ծավալների կտրուկ նվազում, ինչը հիմնականում պայմանավորված էր նախկին միութենական հանրապետությունների միջև ամուր տնտեսական կապերի խզումով, ֆինանսական միջոցների բացակայությամբ, երկրի շրջափակմամբ և, հետևաբար, տրանսպորտային բարձր ծախսերով: Արդյունքում, ստեղծված իրավիճակից օգտվեցին արտասահմանյան մատակարարները, հիմնականում Իրանի և Թուրքիայի ներկայացուցիչները, որոնք ներխուժեցին Հայաստանի շուկա և իրենց կողմից ներկրված ցածրորակ արտադրանքով լրացրեցին տեղական առաջարկի և պահանջարկի միջև եղած ճեղքվածը:



Գծապատկեր 2. Պահածոների սեկտորի դինամիկան 1985-2002թթ. ընթացքում (միլիոն պայմանական միավոր, որը հավասար է 0.65 կգ-ի)

Աղբյուրը՝ «Ամերիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը

Ազատ շուկայական տնտեսության և իրական մրցակցային միջավայրի ստեղծման արդյունքում պահածոների գործարանների բացարձակ մեծամասնությունը դադարեց գործել, իսկ մի քանիսն ընդունելով արևմտյան արտադրության ու շուկայավարման սկզբունքները և միաժամանակ կատարելով զգալի ներդրումներ տեխնոլոգիական սարքավորումների արդիականացման նպատակով՝ ոչ միայն կարողացան հասնել շոշափելի հաջողությունների հայկական նոր տնտեսությունում՝ փոխարինելով Թուրքիայից և Իրանից ներկրվող արտադրանքը սեփական արտադրության որակյալ արտադրանքով, այլ նաև ունենալ հսկայական առաջխաղացում արտահանման հարցում: Այդ ձեռնարկությունների թվին պատկանում են «Արարատ-Պահածո», «Արտաշատի պահածոների գործարան», «Սարդարապատի պահածոների գործարան», «ՄԱՊ», «Կարմիր լոլիկ», «Մեղրու պահածոների գործարան», ինչպես նաև «Արտաշես» ընկերությունները: Վերը նշված ընկերություններից «Արարատ-Պահածո» և «Արտաշատի պահածոների գործարան» ընկերությունները արտադրում են տոմատի մածուկ և մրգային պյուրեներ՝ լցված ասեպտիկ տոպրակների ու տակառների մեջ: Ընդհանուր արտադրանքի ավելի քան 90%-ը իրացվում է արտասահմանյան շուկաներում: Թիրախային հիմնական սեգմենտներն են արդյունաբերական սպառողները, որոնք զբաղվում են տոմատի հյութի և կետչուպի, մրգային հյութերի, յոգուրտների, և այլ արտադրանքի արտադրությամբ: «Սարդարապատի պահածոների գործարան» և «ՄԱՊ» ընկերությունները չնայած այն բանին, որ սկզբնական շրջանում ունեին կողմնորոշում դեպի արտահանման շուկայի արդյունաբերական սպառողները, ներկայումս հիմնվում են տեղական մանրածախ առևտրի վրա: Այսպիսով, վերը նշված արտադրողներին կարելի է բաժանել երկու խմբերի: Առաջինը, ներառյալ երկու խոշորագույն արտադրողներ՝ Արարատի և Արտաշատի գործարանները, թիրախում է արդյունաբերական սպառողներին, իսկ երկրորդը՝ ներառում է բոլոր մյուս պահածոների գործարանները, որոնք թիրախում են վերջնական սպառողներին:

Վերը նշված ձեռնարկությունների կողմից տեխնոլոգիական սարքավորումների արդիականացման և տեխնոլոգիական ներդրումների իրականացման փաստն արձանագրելու հետ մեկտեղ՝ անհրաժեշտ ենք համարում շեշտել այն կարևորագույն հանգամանքը, որ այդ գործընթացը հիմնականում իրագործվել է ընկերությունների հիմնադիրների սեփական միջոցների հաշվին: Այս իրողությունը հիմնականում պայմանավորված է եղել այդ ժամանակահատվածում Հայաստանում, ինչպես լիզինգային գործառնության ի սպառ բացակայությամբ, այնպես էլ վարկային ռեսուրսների բավականին բարձր՝ 1997-1998 թթ այն կազմել է մոտավորապես 48 %, տոկոսադույքով և կարճ ժամկետայնությամբ, ինչը ֆինանսավորման այս եղանակի կիրառելիությունը տեխնոլոգիական վերազինման նպատակով դարձրել է բավականին անարդյունավետ:

Տեխնոլոգիական ներդրումների արդյունքում արտադրության ծավալների և արտահանման հնարավորությունների աճի հետ մեկտեղ պետք է շեշտել այն կարևորագույն հանգամանքը, որ ձեռնարկությունների կողմից լիովին չեն օգտագործվում ներդրված սարքավորումների տեխնոլոգիական կարողությունները: Այսպես, ինչպես վերը նշվել էր, FBR-Elpo մակնիշի ասեպտիկ հոսքագծի հիմնական առաքելությունը պահածոյացման գործընթացում կայանում է տարաներում պատրաստի հումքի լցման գործընթացի հետաձգման հնարավորության ընձեռման մեջ: Մինչդեռ վստահորեն կարելի է փաստել, որ այս ձեռնարկությունները ամբողջությամբ չեն օգտվում այդ հնարավորությունից, վերջիններս իրականացնում են վերամշակված հումքի՝ ասեպտիկ տակառներով արտահանում՝ դրանով իսկ վերջնական սպառման համար նախատեսված արտադրանքի արտադրության ցիկլը թողնելով անավարտ: Արդյունքում, մեծ հեռանկար ունեցող այս ճյուղը, չնայած իր արտահանման բնույթին, հնարավորություն չի ստեղծում ձերբազատվել հատկապես Խորհրդային Հայաստանին բնորոշ արդյունքների միջանկյալ արտադրության քրոնիկ հիվանդությունից, այն է՝ ստանալ լրացուցիչ

հավելյալ արժեք արդյունքների վերջնական արտադրությունում և համաշխարհային շուկային ներկայանալ որպես վերջնական արդյունքներն արտահանող երկրի:

Այսպիսով, ուսումնասիրելով սննդի (տոմատի մածուկի և մրգային պյուրեների) վերամշակման արդյունաբերության ճյուղի կորիզը կազմող ձեռնարկություններում վերջին տասնամյակում կատարված տեխնոլոգիական ներդրումներ՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- ուսումնասիրված ձեռնարկություններում իրականացվել են արտադրական ֆոնդերի արդիականացում՝ ներդնելով ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներ,
- տեխնոլոգիական սարքավորումների ներդրման ֆինանսավորումը հիմնականում իրականացվել է ձեռնարկությունների սեփական ուժերով,
- ձեռնարկությունները՝ շնորհիվ արտադրական սարքավորումների արդիականացման, կարողացել են արտասահմանյան սպառողին ներկայացնել որակյալ, մրցունակ արտադրանք,
- ձեռնարկությունների կողմից ամբողջովին չեն օգտագործվել FBR-Elpo մակնիշի ասեպտիկ հոսքագծի տեխնոլոգիական կարողությունները, ինչի արդյունքում ձեռնարկությունները իրականացնում են ոչ թե վերջնական սպառման համար նախատեսված արտադրանքի արտահանում, այլ արդյունաբերական սպառման համար նախատեսված վերամշակված հումքի արտահանում՝ ասեպտիկ տակառներով:

Այսպիսով, վերջնական արդյունքի արտադրությունը և արտահանումը Հայաստանում չպետք է կրի լոկ ցանկության բնույթ, այլ դառնա իրականություն և դրանով իսկ հնարավորություն ընձեռի մեր երկրին՝ համաշխարհային շուկա ներկայանալ որպես վերջնական արտադրանքի արտահանող: Իհարկե, տնտեսության ճյուղի առանձին ձեռնարկությունների կողմից սեփական ուժերով այս խնդրի իրագործումը բավականին դժվար է և, անշուշտ, պահանջում է պետության անմիջական աջակցությունը, որը կարող է դրսևորվել նպատակաուղղված արդյունաբերական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով:

Այսպիսով, ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում տնտեսության որոշ ճյուղերի զարգացումը անխուսափելիորեն պահանջում է պետական աջակցություն, որը դրսևորվում է նպատակաուղղված արդյունաբերական քաղաքականության մշակման և վերջինիս արդյունավետ իրականացման մեջ: Իսկ արդյունաբերական քաղաքականության մշակման ժամանակ՝ որպես «գերակա» ճյուղի ընտրման չափանիշ, պետք է ընտրվի վերջնական արդյունք արտահանող, ինչպես նաև վերջինիս հետ տնտեսապես կապված ճյուղի չափանիշ, ինչի օրինակ է հանդիսանում սննդի վերամշակող արտադրությունը և տարաների /թիթեղյա և ապակյա/ արտադրությունը:

ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԲԻԶՆԵՍ-ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ «ԱՐՄԱՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Բիզնեսի կառավարման և՛ տեսաբանները, և՛ գործնական աշխատողներն այն կարծիքին են, որ բիզնեսի ռազմավարությունը մեկ և ընդմիշտ տրված երևույթ չէ, այլ անընդհատ զարգացող գործընթաց: Քանի որ շրջակա միջավայրը անընդհատ փոփոխվում է, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում փոխելու բիզնեսի ներքին միջավայրը և նրա ռազմավարական նպատակները: Այդ իսկ տեսակետից էլ բիզնես-ռազմավարությունը որոշակի կոնկրետ բովանդակություն է ստանում՝ բիզնեսը անընդհատ հարմարեցնել իր շրջակա միջավայրին: Միայն այս պայմանի պահպանման դեպքում ընկերությունը կկարողանա գոյատևել և զարգանալ:

Բիզնես-ռազմավարությունը գործընթաց է, որն ընդգրկում է իր երեք ընթացակարգերը.

- ռազմավարական վերլուծություն,
- ռազմավարական ընտրություն,
- ռազմավարության իրականացում:

Ռազմավարական վերլուծության ընթացակարգի նպատակը ռազմավարական խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու մշակումն է: Որպես կանոն՝ ընկերությունները ռազմավարական վերլուծությունն իրականացնում են երկու փուլերով: Առաջին փուլում իրականացնում են ընկերության ներքին միջավայրի հետազոտություն՝ ներքին վերլուծություն, որն իրենից ներկայացնում է ընկերության ներտնտեսական գործընթացների և կառուցվածքների մանրակրկիտ ուսումնասիրություն նրա «թույլ» և «ուժեղ» կողմերը բացահայտելու նպատակով: Երկրորդ փուլում իրականացնում են ընկերության արտաքին միջավայրի վերլուծություն, որն իրենից ներկայացնում է արտաքին միջավայրի երկու «շերտերի»՝ միկրո և մակրո միջավայրի մանրակրկիտ ուսումնասիրություն նրա մրցունակության և կարողությունների բացահայտման նպատակով: Ներքին և արտաքին վերլուծությունների իրականացման արդյունքում բացահայտվում են այն գործոնները, որոնք բարենպաստ պայմաններ և հնարավորություններ են ստեղծում ընկերության արդյունավետ կենսագործունեության ապահովման և այն գործոնները, որոնք կորուստների և վնասների առաջացման պատճառ են դառնում ընկերության գործունեության ամբողջ ընթացքում: Այս չորս խումբ գործոնների ազդեցության SWOT վերլուծության (Strengths-ուժեղ, Weaknesses-թույլ կողմերի, Oportunities-հնարավորությունների, Threats-վտանգների) հիման վրա կարող են բացահայտվել այն հիմնական խնդիրները, որոնց լուծման համար մշակվելու է համապատասխան բիզնես-ռազմավարություն: Բիզնես-ռազմավարական գործընթացի այն փուլից